

ԼԷՈՆԱՐՏՈՅ ՏԱ ՎԻՆՉԻՒՆ

Գերեզմանն ու մանարձանը .

Արդէն ծանօթ էր որ Լէոնարտոյ տա վինչի՝ երեւի նկարիչ , արձանագործ , երաժիշտ , բանաստեղծ , մեքենագործ , ճարտարապետ , ու շինուածապետ , ծնեալ յամին 1452 Ֆիորենցայի շրջակայքը , Ֆրանչիսկոս Ա թագաւորէն Գաղղիա հրաւիրուեցաւ և հոն ամենայն փառք պատուեցաւ . նոյնպէս ծանօթ էր որ Լէոնարտոյ տա վինչի Ամպուազ քաղաքը մեռաւ յամին 1519 , բայց իր գերեզմանը կորսուած էր . և ծանօթ չէր ուր թաղուած ըլլալը : Վերջերս այս գերեզմանը գտնուեցաւ , յուրախութիւն և խնդութիւն բովանդակ քաղաքին , որ կը պարծի այն մտահարուստ իտալացոյն ոսկերացն աւանդապահ ըլլալուն : Այս բարի լրոյս վերայ հիմա ուրիշ լաւագոյն մըն ալ աւելցաւ , այսինքն է Գաղղիացոց վեհափառ կայսրը հրամայեւ է որ մահարձան մը կանգնուի ի յիշատակ Լէոնարտոյի , անոր պատուադիր և կայսեր արժանաւոր : Գեղեցիկ արուեստից հազարապետն ու վերատեսուչն ետեւէ են հաստատելու այս մահարձանին ձեւը , որուն խարսխին վրայ պիտի քանդակուին հետագայ պարզ խօսքերս .

ՖՐԱՆԿԻՍԿՈՍ Ա ԿՈՉԵԱՅ Ի ԳԱՂԴԻԱ ԶԼԷՈՆԱՐՏՈՅ

ՏԱ ՎԻՆՉԻ

ՆԱԲՈՒՆՈՆ Գ ԿԱՆԳՆԵԱՅ ՆՄԱ ԶԱՅՍ ՄԱՀԱՐՁԱՆ

Ուստի կրնայ ըսուիլ որ մեծամեծ մարդկանց փառաց ըյսը կը ցոլանայ

իշխանաց վրայ , որ կը պատուեն զանոնք նաև անոնց մահուընէն շատ դար ետքը :

Արդէն այս համայնագէտ իտալացոյն կենսագրութիւնը հրատարակած ըլլալով օրագրիս մէջ¹ բաւական ընդարձակ տեղով , այս նոր տեղեկութիւնս ալ կու տանք իբրև յաւելուած :

Մեծ վիշապ ձուկ մը :

Անգղիացի նաւապետ մը իր ծովային ճանապարհորդութենէն դառնալով՝ պատմեց , որ 1864^և սեպտեմբերի 4^և մինչդեռ վերմինվազի գետեզերքներէն երեք մղոն հեռու խարխախ ձգած կեցեր էր , իրիկուան դէմ ժամը եօթին տեսաւ հեռուն ճերմակ ժապաւէնի պէս երկայն բան մը , որ և հետզհետէ նաւուն կը մօտենար : Երբ որ 12 կամ 15 ոտք միջոց մնաց անոր և նաւուն մէջ , տեսան որ ժապաւէն կարծածն չափազանց երկայնութեամբ ձուկ մըն էր , երկու հարիւր կամ 250 ոտքի չափ , և ձեւը օձաձկան կը նմանէր : Ճօճական շարժմամբ մը առաջ կու դար հոսանքին դէմ . շարժմունքները դանդաղ էին և ամենևին յուզմունք չէին պատճառել ջրին վրայ :

¹ Բազմավէպ ԺԱ . 303 :